Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԳՈՒԱՎԱ» ՍՊԸ թիվ 1 մասնաճյուղին, «ԷՄԷ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԷՄԶԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «ՍԻԿՈՐ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՕԿ Կրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ «Ամիրյան», «Թումանյան», «Շենգավիթ», «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Ավան» մասնաճյուղերը գրանցելու մասին

ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 1 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 25Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 16-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 26-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 27-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԳՈՒԱՎԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1 մասնաճյուղին, «ԷՄԷ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշումներ թիվ 22Ա, 31Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԷՄԶԱ ՔՈՄՓԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «ՍԻԿՈՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 23Ա, 30Ա):

- ***Գրանցվել են*** «ՕԿ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ամիրյան», «Թումանյան», «Շենգավիթ», «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Ավան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/88Ա, 113Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 6 000 000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/96Ա), 1 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/97Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2023 թ. մարտի 14-ի թիվ 25Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 12.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 9,25%:

28 փետրվարի 2023 թվականի թիվ 16-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով հնարավորություն տալու փոխանակման կետերին ինքնուրույն որոշելու իրենց աշխատակիցներին ներկայացվող որակավորման պահանջները և ստանձնելու վերջիններիս մասնագիտական որակավորման համար պատասխանատվություն,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2007 թվականի մայիսի 17-ի ««Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգի 1-ին կետի 2-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:
2) Կանոնակարգի 3-րդ կետի 9-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:
3) Կանոնակարգի 4-րդ և 5-րդ կետերի 9-րդ ենթակետերը ճանաչել ուժը կորցրած:
4) Կանոնակարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:
5) Կանոնակարգի գլուխ 4-ը ճանաչել ուժը կորցրած:
6) Կանոնակարգի գլուխ 5-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«ԳԼՈՒԽ 5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԴԻՐ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻՆ ՆՈՐ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ»:
7) Կանոնակարգի 37-րդ կետի 6-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:
8) Կանոնակարգի 40-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:
9) Կանոնակարգի 43-րդ կետում «Եթե 35-րդ, 37-րդ, 40-րդ և 41-րդ կետերով» բառերը փոխարինել «Եթե 35-րդ, 37-րդ և 41-րդ կետերով» բառերով:
10) Կանոնակարգի գլուխ 6-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«ԳԼՈՒԽ 6. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ»:
11) Կանոնակարգի 45-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. փետրվարի 28-ին (ՀՀԳՏ, 09.03.2023):

12) Կանոնակարգի 46-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«46. Կենտրոնական բանկը կորած կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձած լիցենզիայի և (կամ) լիցենզիայի ներդիրի կրկնօրինակը փոխանակման կետին է հանձնում պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:»:
13) Կանոնակարգի 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«47. Լիցենզիայի և (կամ) լիցենզիայի ներդիրի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:»:
14) Կանոնակարգի 50-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:
15) Կանոնակարգի 85-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«85. Արտարժույթի առուվաճառքի գործառնություններ կարող են իրականացնել միայն Կենտրոնական բանկի տրամադրած լիցենզիայի ներդիրում ընդգրկված աշխատակիցները: Փոխանակման կետի աշխատակիցը (աշխատակիցները) փոխանակման կետի լիցենզիային կից ներդիրում ընդգրկվելու դեպքում համարվում է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված որակավորման վկայական ստացած:»:
16) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 85.1-րդ կետով.
«85.1.Փոխանակման կետի աշխատակիցը փոխանակման կետի նախաձեռնությամբ փոխանակման կետի լիցենզիային կից ներդիրից հանվելու դեպքում չի համարվում «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված որակավորման վկայականից զրկված:»:
17) Կանոնակարգի Հավելվածներ 1-ի, 2-ի, 9-ի «Աշխատակցի մասին» աղյուսակի 1.9-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:
18) Կանոնակարգի Հավելված 6-ը, 7-ը, 10-ը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

21 մարտի 2023 թվականի թիվ 26-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնելու վարկավորման վերաբերյալ ֆինանսական կազմակերպությունների կողմից կայացվող որոշումների թափանցիկությունը, վարկարժանության գնահատման համակարգերի, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների գործունեություն մասին սպառողների իրազեկվածությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ և 96-րդ հոդվածի 2-րդ մասերը, «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ, 70-րդ և 83-րդ հոդվածները, 182-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը.

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետում 1-ին նախադասության վերջին պարբերությունում «ֆինանսական խմբի» բառերից հետո լրացնել «կամ ֆինանսական ծառայության» բառերը:

2) Կանոնակարգի 4-րդ կետի 12-րդ ենթակետի «գ» պարբերությունից հանել «(համեմատվում են օրինակ, 2 տարի ժամկետով, 3 միլիոն գումարով, ֆիքսված անվանական տոկոսադրույքով վարկերը)» բառերը:

3) Կանոնակարգի 4-րդ կետի 14-րդ ենթակետում «անվճար» բառից հետո լրացնել «, 0 տոկոս» բառը:

4) Կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) տպագիր կամ այլ ձևով հրապարակվող ֆինանսական ծառայությունների մասին տեղեկատվությունը պարունակում է աչքի ընկնող և առանձնացված ձևով (այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով) նշում այն մասին, որ ֆինանսական կազմակերպությունը վերահսկվում է Կենտրոնական

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. մարտի 21-ին (ՀՀԳՏ, 31.03.2023):

բանկի կողմից: Այն դեպքում, երբ սոցիալական ցանցի պաշտոնական էջերում սույն ենթակետով սահմանված ձևաչափի (օրինակ տառատեսակ, տառաչափ և այլն) պահպանումը անհնարին է, ապա սոցիալական կայքում՝ աչքի ընկնող հատվածում նշվում է պահանջվող տեղեկատվությունը:)»:

5) Կանոնակարգի 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-րդ, 12.2-րդ և 12.3-րդ կետերը.

«12.1 Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունն իր պաշտոնական ինտերնետային կայքից, բջջային/առցանց հավելվածից բացի տեղեկատվության տարածման համար վարում է այլ կայքեր, հավելվածներ կամ նմանատիպ հարթակներ, որոնց միջոցով հրապարակային առաջարկում է կամ մատուցում է որևէ ֆինանսական ծառայություն, ապա ֆինանսական կազմակերպությունը այդ հարթակներում և կայքերում, տեսանելի վայրում և աչքի ընկնող ձևաչափով հրապարակում է.
1) Ֆինանսական կազմակերպության անվանումը,
2)Ինչպես նաև աչքի ընկնող ձևաչափով հայտարարություն այն մասին, որ ֆինանսական կազմակերպության և վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների համար ամբողջական տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է այցելել ֆինանսական կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայք՝ հղում տալով համապատասխան կայքին:

12.2 Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը գտնվում է վերակազմակերպման, լուծարման, ինքնալուծարման գործընթացում, ապա նշված գործընթացը պաշտոնապես հաստատվելուց հետո, եթե առավել երկար ժամկետ նախատեսված չէ տվյալ տեսակի ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական խմբի համար, 1 աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական կազմակերպության առնվազն ինտերնետային կայքում (առկայության դեպքում նաև պաշտոնական սոցիալական էջերի և այլ պաշտոնական հարթակների միջոցով), հայտարարության ձևաչափով համառոտ հրապարակում է այդ մասին, նշելով նաև՝
ա. սպառողների հետագա սպասարկման գործընթացների, սպառողներից պահանջվող գործողությունների/քայլերի մասին, ինչպես նաև հարցերի դեպքում սպառողը ինչ հաղորդակցման միջոցներով (օրինակ՝ հեռախոսահամար, էլ. հասցե) կարող է կապ հաստատել:

բ. առկայության դեպքում լուծարային հանձնաժողովի, գործառույթների, ինչպես նաև վերջիններիս հետ կապ հաստատելու մասին տվյալներ (հեռախոսահամար, էլ. հասցե, գործունեության վայր),

գ. պահանջների բավարարման հերթականության մասին (առկայության դեպքում):

6)Կանոնակարգի 17-րդ կետի 12-րդ ենթակետում «(լրացուցիչ, օժանդակ)» բառերը փոխարինել «համակցված, օժանդակ, բոնուսային, լրացուցիչ» բառերով:

7)Կանոնակարգի 18-րդ կետի 4-րդ ենթակետում «փոքր տառաչափով» բառերից հետո լրացնել «կամ այլ, ոչ աչքի ընկնող ձևով» բառերը:

8)Կանոնակարգի 18-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) եթե սպառողի պարտավորությունների կատարումն ապահովված է գրավով և (կամ) երաշխավորությամբ, ապա նշվում է ապահովության (գրավի) տեսակը, ընդ որում՝ նման պահանջի առկայության դեպքում ներկայացվում է նաև երաշխավորության վերաբերյալ բացատրական տեղեկատվություն (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05-ով սահմանված Անհատական թերթիկում երաշխավորության վերաբերյալ ներկայացված բացատրական տեղեկատվությունը),»:

9)Կանոնակարգի 18-րդ կետի 20-րդ ենթակետը «ներքին իրավական ակտերով,» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասություններով.
«տեղեկատվություն վարկ տրամադրելու որոշումների կայացման համար կիրառվող վարկարժանության գնահատման եղանակների վերաբերյալ (վարկային պատմություն, վարկային սքոր), այդ թվում՝
ա. Վարկային պատմության էությունը, կարևորությունը, ինչպես է այն ձևավորվում, ինչ տեսակի և ինչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում, ինչ պետք է անեն սպառողները սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար և այլն, ինչպես նաև հղում www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:

բ. Վարկային սքորի (կիրառելու դեպքում) էությունը, կարևորությունը, ինչ տեսակի վարկային սքոր է կիրառվում ֆինանսական կազմակերպության կողմից (Ֆայկո, ԱՔՌԱ, սեփական սքոր գնահատական, թե այլ): Սեփական վարկային սքոր կիրառելու դեպքում տեղեկատվություն սքորի հաշվարկի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնների (օրինակ՝ գործող վարկերի գումար և քանակ, վարկային պատմության երկարություն, վարկային հարցումներ, ժամկետանց վարկեր և այլն) և դրանց ազդեցության ուղղության (բարձրացնում է, թե իջեցնում է սքորը) վերաբերյալ: ԱՔՌԱ կամ Ֆայկո սքոր կիրառելու դեպքում տեղադրվում են հղումներ www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:

գ. Ինչ քայլեր կարող են ձեռնարկել սպառողները իրենց վարկային պատմությունը և սքորը բարելավելու համար (օրինակ՝ մարել գործող վարկերի մի մասը, բացառել գործող վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը), ինչպես նաև ինչ գործողություններ չպետք է անեն վարկային պատմության և սքորի վատթարացումից խուսափելու համար:»

10)Կանոնակարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի գ1 մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ1. Հայտարարություն այն մասին, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին ՀՀ օրենքի համաձայն ֆիզիկական անձը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերը, իրավաբանական անձը հնարավորություն ունի ներկայացնելու ֆինանսական կազմակերպության և իր միջև կնքվող գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին: Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել, ապա նշում այդ մասին: Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը կնքել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր որոշակի սահմանափակումներով (օրինակ՝ համաձայնագիր, որը տարածվում է մինչև 250,000 ՀՀ դրամ գումարով գույքային պահանջների վրա), ապա նշում է կատարվում նաև տվյալ սահմանափակման մասին,»:

11)Կանոնակարգի 41-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.1-րդ կետ.

«41.1 Սոցիալական ցանցում պաշտոնական էջ ունենալու դեպքում ապահովում են տվյալ սոցիալական ցանցի կողմից պատշաճ նույնականացում (Օրինակ՝ Ֆեյսբուքյան էջի դեպքում հավաստիության նշան՝ «Վերիֆայդ Բադջ» (Verified Badge))»:

12)Կանոնակարգի 43-րդ կետի «էջերում» բառից հետո լրացնել «ֆինանսական կազմակերպության մասին հատվածում (օրինակ՝ Ֆեյսբուքյան էջի «իրենց մասին» (About) կամ «գլխավոր» (Home) էջ հատվածում» բառերը:

13)Կանոնակարգի 43-րդ կետի 6-րդ ենթակետում «:» նշանը փոխարինել «,» նշանով և 43-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերով.

«7) Հաճախ տրվող հարցեր (օրինակ՝ հղման միջոցով պաշտոնական ինտերնետային կայքի համապատասխան բաժնին):
8) Մասնաճյուղերի ցանկ (օրինակ՝ հղման միջոցով պաշտոնական ինտերնետային կայքի համապատասխան բաժնին):
9) Գաղտնիության քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն (օրինակ՝ հղման միջոցով պաշտոնական ինտերնետային կայքի համապատասխան բաժնին):»:

14)Կանոնակարգի 46-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 46.1-րդ կետ.

«46.1 Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը բացահայտում է սոցիալական ցանցում իր գործունեության, անվանման կամ այլ չափորոշիչների համանման կեղծ էջեր, ապա, այդ մասին իրեն հայտնի դառնալուց 1 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է այդ մասին սպառողներին պատշաճ տեղեկացումը (պաշտոնական սոցիալական էջերի, կայքի միջոցով կամ այլ հասանելի հարթակներով)»:

15)Կանոնակարգի 53-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53. Ֆինանսական կազմակերպության գովազդը, որը պարունակում է նշում տվյալ ծառայության սակագնի (տոկոսադրույք, պարտադիր կամ այլ վճարներ) մասին, պարունակում է նաև տեղեկատվություն այն մասին, որ առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ ֆինանսական կազմակերպությունից, ինչպես նաև հղում է կատարում տվյալ ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքին:»:

16)Կանոնակարգի 53-րդ կետի 1-ին ենթակետի «սակագնի (տոկոսադրույքի» բառերից հետո լրացնել «,պարտադիր կամ այլ վճարներ» բառերը, իսկ երկրորդ նախադասության մեջ «տարեկան փաստացի տոկոսադրույքը» բառերից հետո լրացնել «(տարեկան տոկոսային եկամտաբերություն)» բառերը:

17)Կանոնակարգի 57-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«57. Ֆինանսական կազմակերպության գործունեության վայրում որևէ ձևաչափով (օրինակ՝ թղթային, էլեկտրոնային) մշտապես պետք է հասանելի լինեն ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվական ամփոփագրերը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 3 ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

21 մարտի 2023 թվականի թիվ 27-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնելու վարկավորման վերաբերյալ ֆինանսական կազմակերպությունների կողմից կայացվող որոշումների թափանցիկությունը և վարկարժանության գնահատման համակարգերի մասին սպառողների իրազեկվածությունը,

հիմք ընդունելով «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասը, 9-րդ հոդվածի 6-րդ մասը, «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 17-րդ հոդվածի 5-րդ մասը, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետը, 7-րդ հոդվածի 2-րդ մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 2-րդ մասի 7-րդ կետը և 8-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1.1-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 9.1-րդ հոդվածը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 81-րդ հոդվածի 3.1-րդ մասը, 95-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի ««Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 10-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բանավոր բացատրում է վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի (կիրառելու դեպքում) էության և դրա կարևորության, կիրառվող սքորի տեսակի (Աքռա, Ֆայկո, սեփական սքոր գնահատական, թե այլ), սքորի վրա ազդող հիմնական գործոնների մասին: Ընդ որում՝ հեռահար եղանակով վարկային հայտ ընդունելիս սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը պետք է ներկայացվի աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ Վարկային պատմության և սքորի վերաբերյալ առանձին վերնագրի ներքո, այլ տառատեսակով և տառաչափով:

2) Կանոնակարգի 10-րդ կետը 1-ին ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1 ենթակետով.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. մարտի 21-ին (ՀՀԳՏ, 31.03.2023):

«1.1) Ներկայացնում է նաև տեղեկատվություն սքոր գնահատականի վրա վարկային հարցման ազդեցության վերաբերյալ՝ հստակ նշելով սքորի տեսակը և գործողության ազդեցության ուղղությունը: Ընդ որում սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը պետք է ներկայացվի նախքան հարցման կատարման համաձայնության ստացումը, իսկ հեռահար եղանակով վարկային հայտ ընդունելիս ներկայացվում է անմիջապես տվյալ էջում՝ հաստատման նշում պարունակող դաշտի առկայությամբ:»:

3) Կանոնակարգը 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1 և 10.2 կետերով.

«10.1 Կրեդիտային կամ այլ ծառայություններից օգտվելու հայտ ներկայացնելիս ֆինանսական կազմակերպությունը սպառողին գրավոր տրամադրում է տեղեկատվություն վարկային բյուրոյից սպառողի մասին կատարվող հարցումների վերաբերյալ, որն առնվազն պետք է ներառի հետևյալը.

ա. Կատարվող հարցումների նպատակը առանձին տողերով (օրինակ՝ վարկի տրամադրում, գործող վարկի մոնիտորինգ, այլ ծառայությունների առաջարկ):

բ. Հարցման յուրաքանչյուր նպատակի համար առանձին նշվում է հարցման հաճախականությունը (եթե սահմանված է) և ժամկետը, որի համար տրվում է համաձայնությունը, ինչպես նաև ազդեցությունը վարկային սքորի վրա (օրինակ՝ բարձրացնում է, իջեցնում է, չի ազդում): Ընդ որում, հարցման ժամկետը չի կարող լինել ավելին, քան տվյալ ծառայության պայմանագրի գործողության ժամկետն է:

գ. Եթե սույն կետի համաձայն որևէ նպատակով հարցումներ կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է հայտ ներկայացնելու համար, ապա՝ նշում այդ մասին: Ընդ որում, մարքեթինգային, այլ ծառայությունների առաջարկի նպատակով իրականացվող հարցումները չեն կարող համարվել պարտադիր պայման այդ ծառայությունը մատուցելու համար:»:

10.2 Յուրաքանչյուր անգամ սպառողի վերաբերյալ վարկային հարցում կատարելիս, եթե այդ հարցումը ազդելու է վարկային սքոր գնահատականի վրա (Ֆայկո, Աքռա կամ սեփական սքոր), ապա ֆինանսական կազմակերպությունը պարտավոր է սպառողին հայտնել այդ մասին հարցումը կատարելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով հարցման ամսաթիվը, նպատակը (օրինակ՝ նոր վարկի տրամադրում, վարկի գումարի ավելացում) և տեսակը (վարկային պատմություն թե սքոր), ինչպես նաև տեղեկատվություն կամ հղում սույն Կանոնակարգի 10-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված վարկային պատմության/վարկային սքորի վերաբերյալ տեղեկատվությունը պարունակող ինտերնետային կայք(եր)ի համապատասխան էջին:

Ֆինանսական կազմակերպությունը սույն կետով սահմանված տեղեկատվությունը սպառողին հայտնում է անվճար՝ էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Սպառողի վարկային սքորի վրա ազդեցություն ունեցող հարցումներ կատարելիս էլեկտրոնային հաղորդագրության միջոցով այդ տեղեկատվությունն ուղարկելու անհնարինության դեպքում (երբ սպառողը չունի էլեկտրոնային հասցե կամ չի օգտվում բանկի առցանց կամ բջջային հավելվածներից), ֆինանսական կազմակերպությունը տեղեկացնում է սպառողին այլ հասանելի եղանակներով (օրինակ. կարճ հաղորդագրության, առձեռն կամ փոստային առաքման միջոցով):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 3 ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2023)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 16
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 20
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 25
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 26
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 36
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 53
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 63
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 65
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 74
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2023թ. փետրվարի իրական աճի փոփոխությունը 2022թ. փետրվարի նկատմամբ (%)[1]*	*2023թ. մարտի իրական աճի փոփոխությունը 2022թ. մարտի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	11.3	14.0
Արդյունաբերական արտադրանքի ծավալ	0.7	8.6
Շինարարության ծավալ	13.9	19.0
Առևտրի շրջանառության ծավալ	18.2	26.1
Ծառայությունների ծավալ (առանց առևտրի)	21.2	21.1
Էլեկտրաէներգիայի արտադրություն	1.3	-5.8
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ	13.9[2]	20.8[2]



ԳՆԱՃ


Ժամանակաշրջան	2020	2021	2022	2023
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.4	2.2	1.6	1.4
Փետրվար	-0.2	0.6	0.1	0.1
Մարտ	0.5	1.0	1.8	-0.7
Ապրիլ	0.9	1.3	2.3	
Մայիս	-0.1	-0.4	0.1	
Հունիս	-1.4	-0.8	0.3	
Հուլիս	-2.1	-0.5	-1.4	
Օգոստոս	-0.1	0.4	0.2	
Սեպտեմբեր	-0.2	-0.1	0.6	
Հոկտեմբեր	0.5	0.7	0.3	
Նոյեմբեր	1.3	1.7	1.1	
Դեկտեմբեր	3.4	1.6	1.1	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.3	4.5	7.1	8.1
Փետրվար	-0.5	5.3	6.5	8.1
Մարտ	-0.1	5.8	7.4	5.4
Ապրիլ	0.9	6.2	8.4	
Մայիս	1.2	5.9	9.0	
Հունիս	1.7	6.5	10.3	
Հուլիս	1.5	8.2	9.3	
Օգոստոս	1.8	8.8	9.1	
Սեպտեմբեր	1.4	8.9	9.9	
Հոկտեմբեր	1.3	9.1	9.5	
Նոյեմբեր	1.6	9.6	8.8	
Դեկտեմբեր	3.7	7.7	8.3	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

Անվանում	2023 թ. մարտը 2022 թ. մարտի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**5.4**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	5.1	2.09
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.3	0.38
Հագուստ և կոշիկ	7.4	0.25
Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	4.2	0.67
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	11.3	0.47
Առողջապահություն	5.1	0.45
Տրանսպորտ	2.5	0.20
Կապ	0.3	0.01
Հանգիստ և մշակույթ	11.2	0.09
Կրթություն	4.7	0.12
Ռեստորաններ և հյուրանոցներ	9.0	0.17
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	10.3	0.53

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [4,5]

Ժամանակաշրջան	2020	2021	2022	2023
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.0	0.7	0.3	0.2
Փետրվար	0.1	0.8	0.6	0.1
Մարտ	0.0	0.8	1.1	-0.1
Ապրիլ	0.5	0.6	1.3	
Մայիս	0.0	0.4	0.7	
Հունիս	-0.1	0.3	1.0	
Հուլիս	-0.1	0.3	0.7	
Օգոստոս	0.1	0.3	0.4	
Սեպտեմբեր	0.3	0.3	0.7	
Հոկտեմբեր	0.3	0.4	0.3	
Նոյեմբեր	0.3	0.6	0.3	
Դեկտեմբեր	0.9	0.5	0.4	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.4	3.0	5.8	7.9
Փետրվար	0.4	3.7	5.6	7.3
Մարտ	0.3	4.6	5.9	6.0
Ապրիլ	0.8	4.6	6.6	
Մայիս	0.8	5.1	7.0	
Հունիս	0.7	5.5	7.8	
Հուլիս	0.8	5.9	8.3	
Օգոստոս	0.8	6.1	8.3	
Սեպտեմբեր	0.9	6.1	8.7	
Հոկտեմբեր	1.2	6.2	8.6	
Նոյեմբեր	1.4	6.6	8.2	
Դեկտեմբեր	2.2	6.2	8.1	



ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[4,5]

Անվանում	2023 թ. մարտը 2022 թ. մարտի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ, այդ թվում՝	**6.0**	
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած (Կ)	19.6	0.70
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ (Ծ)	47.5	0.54
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար (Ծ)	41.3	0.46
Հաց ցորենի, բարձր տեսակի (Կ)	7.9	0.34
Պանիր կովի կաթից (Կ)	14.2	0.22
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար (Կ)	13.2	0.19
Օճառահեղուկ (շամպուն) (Կ)	19.9	0.13
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար (Կ)	3.1	0.12
Թխվածքաբլիթ, պաքսիմատ, վաֆլու շերտեր (Կ)	17.4	0.12
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության (Կ)	10.7	0.11
Բանկերի, փոստային բաժանմունքների կողմից իրականացվող այլ ծառայություններ (Ծ)	45.2	0.11
Բարձրագույն կրթության հաստատությանը վճարված ուսուցման վարձը (Ծ)	4.6	0.10
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած (Կ)	-13.0	-0.12
Բուսական յուղ արևածաղկի (Կ)	-20.0	-0.27
Բենզին (Կ)	-26.9	-0.34

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի x-13Arima -seats մեթոդով կատարված հաշվարկների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2023 թ. հունվար - փետրվար (մլն ԱՄՆ դոլար)	2023 թ. հունվար - փետրվարը 2022 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)	2023 թ. հունվար - մարտ (մլն ԱՄՆ դոլար)	2023 թ. հունվար - մարտը 2022 թ. հունվար - մարտի նկատմամբ (%)
Արտահանում (ՖՕԲ)	994.4	196.4	1664.8	2.3 անգամ
Ներմուծում (ՍԻՖ)	1535.3	167.4	2583.3	189.1
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	540.9	131.7	918.5	145.5

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2022 թվական					
	մարտ			հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	115798	61173	54625	238954	120687	118267
ԱՄՆ	60864	25534	35330	142888	60734	82154
Ուկրաինա	17	1087	(1070)	3522	4042	(520)
Ղազախստան	2686	653	2033	11053	1597	9457
Գերմանիա	6145	4488	1658	15171	10527	4644
Իսպանիա	1463	1991	(528)	3496	4637	(1141)
Ֆրանսիա	7176	3724	3451	17376	7178	10198
ԱՄԷ	1833	18753	(16920)	7016	23924	(16908)
Չինաստան	275	4174	(3899)	602	15408	(14805)
Թուրքիա	121	1201	(1080)	317	2117	(1801)
Այլ երկրներ	56260	36128	20133	120258	119511	747
Ընդամենը	252638	158904	93734	560655	370361	190293

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2023 թվական					
	մարտ			հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	337307	77168	260139	1219456	140020	1079437
ԱՄՆ	59135	39997	19139	143426	95040	48385
Ուկրաինա	62	1397	(1335)	127	4016	(3889)
Ղազախստան	3692	1113	2579	9103	3428	5675
Գերմանիա	6458	11272	(4814)	17031	31709	(14678)
Իսպանիա	2079	9200	(7121)	4555	25705	(21150)
Ֆրանսիա	4111	6345	(2234)	12448	17202	(4754)
ԱՄԷ	5869	52453	(46583)	11816	136918	(125102)
Չինաստան	960	7044	(6084)	1473	16668	(15195)
Թուրքիա	478	1174	(697)	1308	3178	(1870)
Այլ երկրներ	62282	224399	(162117)	161721	555391	(393670)
Ընդամենը	482433	431561	50872	1582464	1029275	553189


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2022 թվական					
	մարտ			հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	57318	30273	27045	116570	58874	57695
ԱՄՆ	30358	12690	17668	69822	29618	40204
Ուկրաինա	9	540	(531)	1695	1961	(266)
Ղազախստան	1324	326	998	5347	779	4568
Գերմանիա	3049	2223	825	7390	5129	2261
Իսպանիա	725	986	(261)	1703	2259	(555)
Ֆրանսիա	3584	1860	1724	8492	3521	4971
ԱՄԷ	909	9410	(8501)	3406	11900	(8494)
Չինաստան	136	2075	(1940)	293	7483	(7190)
Թուրքիա	60	599	(539)	154	1040	(886)
Այլ երկրներ	27964	17974	9990	58751	58062	689
Ընդամենը	125435	78957	46478	273623	180626	92997

մլն ՀՀ դրամ

Երկիր	2023 թվական					
	մարտ			հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	131014	29975	101039	478668	54768	423899
ԱՄՆ	22973	15536	7437	56212	37266	18946
Ուկրաինա	24	543	(519)	50	1577	(1527)
Ղազախստան	1434	432	1002	3570	1342	2227
Գերմանիա	2508	4379	(1870)	6681	12445	(5764)
Իսպանիա	807	3573	(2766)	1784	10083	(8299)
Ֆրանսիա	1597	2465	(868)	4883	6743	(1861)
ԱՄԷ	2279	20379	(18100)	4625	53698	(49073)
Չինաստան	373	2736	(2363)	575	6531	(5956)
Թուրքիա	186	456	(271)	513	1247	(735)
Այլ երկրներ	24193	87174	(62981)	63426	218142	(154716)
Ընդամենը	187388	167648	19739	620985	403844	217141





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2022	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	171.2	170.3	178.9	176.6	175.1	182.2	187.6	192.5	193.3	198.9	202.6	206.8
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	210.4	211.4	225.6	220.8	220.2	231.1	242.2	248.9	250.2	258.8	261.5	264.8
2023	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	228.1	235.2	239.6									
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	293.3	303.5	312.6									

[1] 2023 թվականին իրականացվել են արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեթոդաբանական փոփոխություններ: Մասնավորապես՝ 5 տարվա ֆիքսված միջինները փոխարինվել են 3 տարվա սահող միջիններով: 2023 թվականի համար արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեջ օգտագործվել են 2020-2022 թթ. արտաքին առևտրաշրջանառության տվյալների հիման վրա հաշվարկված միջին կշիռները:

[2] Հաշվարկի մեջ ընդգրկվել են ՀՀ ամբողջ արտաքին առևտրաշրջանառության առնվազն 85% ծածկույթ ապահովող երկրների տվյալները: Հաշվարկներում ներառված չեն ոչ առևտրային բնույթի և պատվիրատուի հումքով կատարվող առևտրաշրջանառությունը, ինչպես նաև ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալները՝ պայմանավորված ըստ երկրների տվյալների բացակայությամբ:

[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ՀՀ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

[4] Ինդեքսի աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2022	2023		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն միջազգային պահուստներ	**4111.8**	**3689.1**	**3544. 8**	**3720.2**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.2	30.6	22.6	21.7
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.2	0.2
Արտարժույթ [1]	4105.6	3658.5	3521.9	3698.2

[1] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2022	2023		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**840.4**	**857.2**	**844.6**	**856.1**
ԱՄՀ վարկ	100.3	102.2	99.5	100.0
ՀՓԻ տեղաբաշխում	282.7	287.9	281.1	286.1
Այլ վարկեր	454.0	464.0	459.3	466.0
Այլ պարտավորություններ	3.4	3.0	4.6	3.9

[1] Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ՝ ԾԻԳ-երի միջոցները)	
2022			
Դեկտեմբեր	8862	381457	**-372595**
2023			
Հունվար	8963	447465	**-438501**
Փետրվար	8840	459041	**-450202**
Մարտ	8944	495516	**-486572**

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Շրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմարկիչ [5]	Դրամային զանգվածի [6]
2022										
Դեկտեմբեր	1922051	675703	1004292	1679995	1113734	2793729	1621243	4414973	2.30	2.35
2023										
Հունվար	1719566	631494	954522	1586016	1135181	2721197	1626545	4347742	2.53	2.45
Փետրվար	1633636	624206	967918	1592124	1158420	2750544	1671754	4422298	2.71	2.52
Մարտ	1745288	630901	1018702	1649603	1170172	2819775	1678045	4497820	2.58	2.40

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվներ (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
2000000
1800000
1600000
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
ՀՀ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
5000000
4500000
4000000
3500000
3000000
2500000
2000000
1500000
1000000
500000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
35
30
25
20


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]


մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2022					
Դեկտեմբեր	1727239	635954	1580803	2699184	4285401
2023					
Հունվար	1737617	638974	1592174	2720515	4321519
Փետրվար	1693655	642656	1618563	2753981	4388759
Մարտ	1756389	647559	1667850	2822180	4454035

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-13-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2000000
1500000
1000000
500000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
700000
600000
500000
400000
300000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3300000
2900000
2500000
2100000
1700000
1300000
900000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
5000000
4600000
4200000
3800000
3400000
3000000
2600000
2200000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2022	2023		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒԽ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***1287519***	***1120512***	***1051302***	***1112632***
ԶՈՒԽ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***634532***	***599054***	***582334***	***632656***
Կառավարություն	-372595	-438501	-450202	-486572
Բանկեր	528267	530252	517677	611884
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	234709	235415	225402	312689
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-2001	0	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	0
